

Հաստատված է <<Լիմիթված ասեթ մենեջմենթ>>
ՓԲԸ խորհրդի կողմից 2022 թվականի հուլիսի
յոթին
Խորհրդի նախագահ



**ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԿԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ
Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ	3
ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....	3
ԲԱԺԻՆ 2. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ (ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ): ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ (ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)	4
ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....	4
ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ, ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ, ՄԵՐԺՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ	4
ԲԱԺԻՆ 3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	7
ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ.....	7
ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	9
ԳԼՈՒԽ 7. ՈՒՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ	9
ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	11
ԳԼՈՒԽ 9. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ	14
ԳԼՈՒԽ 10. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԿԱՍ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	15
ԲԱԺԻՆ 4. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ	15
ԳԼՈՒԽ 11. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	15
ԳԼՈՒԽ 12. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.....	17
ԲԱԺԻՆ 5. ՆԵՐՔԻՆ ԱՌԴԴԻՏԸ.....	17
ԳԼՈՒԽ 13. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՆԵՐՔԻՆ ԱՌԴԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....	17

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է «<Լիմիթեա ասեթ մենեջմենթ>> ՓԲ ընկերության (այսուհետև՝ նաև՝ Ընկերություն) փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետև՝ Օրենք) սահմանված նշանակությունը, եթե այլ բան չի բխում սույն կանոնակարգի բովանդակությունից:

ԳԼՈՒԽ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

3. Ընկերությունը Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով և սույն կանոնակարգով սահմանված կարգով բացահայտում և գնահատում է իր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը և ապահովում բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարումը, վերահսկման մեխանիզմների և ընթացակարգերի կիրառումը:
4. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերը գնահատելիս, մինչև ռիսկի ընդհանուր մակարդակը բնորոշելը և ռիսկերի զսպման համապատասխան մակարդակ սահմանելը, Ընկերությունը հաշվի է առնում ռիսկի բոլոր գործոնները և իրականացնում տարբերակված միջոցառումներ՝ ռիսկի տեսակին և մակարդակին համապատասխան:
5. Ընկերությունը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ վերանայում է իր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը:
6. Ընկերությունը պարբերաբար գնահատում է ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը՝ մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

**ԲԱԺԻՆ 2. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ (ԳՈՐԾԱՐԱՐ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ): ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ (ԳՈՐԾԱՐԱՐ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)**

**ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

7. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետև՝ նաև՝ լիազոր մարմին) հաշվետվություն է ներկայացնում հետևյալ գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ.
 - 1) անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը
 - 2) կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ՝ անկախ գործարքի կամ գործարար հարաբերությունում ներգրավված գումարի չափից:
8. Սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված հաշվետվությունների կազմման և լիազոր մարմին տրամադրման կարգը սահմանվում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, սույն կանոնակարգով և Ընկերության ներքին իրավական այլ ակտերով:
9. Սույն կանոնակարգի 7-րդ կետով նախատեսված հաշվետվությունների կազմումն ապահովելու համար Ընկերության աշխատակիցները ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին են տրամադրում հաշվետվությունը կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:
10. Ընկերությանը, Ընկերության աշխատակիցներին և ղեկավարներին արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման կամ չտրամադրման, ինչպես նաև Օրենքի համաձայն լիազոր մարմինից գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը մերժելու, դադարեցնելու կամ հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:

**ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ, ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ, ՄԵՐԺՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ԳՈՒՅՔԻ
ՍԱՌԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

11. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ներքին դիտարկումների ստորաբաժանման կողմից, ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ ներքին դիտարկումների ստորաբաժանման նախաձեռնությամբ:
12. Սույն կանոնակարգի 11-րդ կետի իմաստով ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող աշխատակիցների, Ընկերության կառավարման մարմինների, ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև Ընկերության այլ

աշխատակիցների կողմից ներքին դիտարկումների ստորաբաժանմանը փոխանցված ազդակները:

13. Սույն կանոնակարգի 11-րդ կետի իմաստով արտաքին ազդակներ են համարվում լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:
14. Գործարքը կամ գործարար հարաբերությունը որակվում է կասկածելի, եթե առկա են կասկածներ կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:
15. Ընկերությունը դիտարկում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և դրա վերաբերյալ լիազոր մարմինն հաշվետվություն տրամադրելու հարցը բոլոր այն դեպքերում, երբ
 - 1) առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,
 - 2) դիտարկվող իրավիճակն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,
 - 3) կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով,
 - 4) գործարքի կամ գործարար հարաբերության պայմաններն ակնհայտորեն չեն համապատասխանում հաճախորդի գործարար բնութագրին, նմանատիպ գործարքների կամ գործարար հարաբերությունների համար սովորաբար կիրառվող պայմաններին:
16. Ընկերության աշխատակիցը կասկածելի գործարքներից մեկը կամ մի քանիսը հայտնաբերելու կամ դրա մասին կասկած ունենալու դեպքում Ընկերության ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին ներկայացնում է տեղեկացում (Էլեկտրոնային կամ թղթային եղանակով), որտեղ նշվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի համարելու հիմքը՝ կցելով նաև իր մոտ առկա փաստաթղթերը և(կամ) տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վերլուծություն կատարելու համար:
17. Ներքին դիտարկումների ստորաբաժանումը սույն կանոնակարգի 15-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված այն դեպքերում, երբ առկա է հնարավոր համընկնում.
 - 1) ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության

հարցում, Օրենքով և սույն կանոնակարգով սահմանված կարգով լիազոր մարմինն ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն և կայացնում հաճախորդի միջոցների սառեցման մասին որոշում:

- 2) լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականներով սահմանված գործողությունները:

18. Ներքին դիտարկումների ստորաբաժանումը սույն կանոնակարգի 15-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ: Այն դեպքում, երբ կատարված վերլուծության արդյունքում ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը պարզում է, որ առկա չեն սույն կանոնակարգով և Օրենքով նախատեսված կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) բոլոր չափանիշները կամ գործարքը (գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքերը անբավարար են, ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը Ընկերության աշխատակցին տեղեկացնում է իր որոշման մասին: Տեղեկացումը կարող է ներկայացվել՝ Ընկերության աշխատակցի կողմից ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրված տեղեկացման վրա «Գործարքը թույլատրել» գրառում կատարելով կամ «Գործարքը թույլատրել» հաղորդագրությունն էլեկտրոնային փոստով Ընկերության աշխատակցին ուղարկելով՝ էլեկտրոնային նամակին կցելով Ընկերության աշխատակցի կողմից ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրված տեղեկացումը:

19. Սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված այն դեպքերում, երբ դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում, և դրա վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրվում լիազոր մարմնին, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են ներքին դիտարկումների ստորաբաժանման կողմից 5 տարի ժամկետով:

20. Ընկերությունը մերժում է գործարքի կատարումը (գործարար հարաբերության հաստատումը) և դիտարկում է դրա կասկածելի որակելու հարցը, երբ

- 1) հնարավոր չէ իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-7-րդ մասերով նախատեսված պարտականությունները,
- 2) Օրենքի համաձայն լիազոր մարմնից ստացվել է գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժման հանձնարարական:

21. Ընկերությունը դադարեցնում է գործարար հարաբերությունը և դիտարկում դրա կասկածելի որակելու հարցը, երբ

- 1) հնարավոր չէ իրականացնել սույն կանոնակարգի 38-րդ կետով սահմանված պարտականությունները,
- 2) Օրենքի համաձայն լիազոր մարմնից ստացվել է գործարար հարաբերության դադարեցման հանձնարարական:

22. Ընկերության աշխատակցի կողմից ներկայացված գործարքի կատարումը (գործարար հարաբերության հաստատումը) մերժելու դեպքում ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն այդ մասին տեղեկացնում է Ընկերության աշխատակցին՝ վերջինիս կողմից ներկայացված տեղեկացման վրա «Գործարքը մերժված է» գրառումով կամ «Գործարքը մերժված է» հաղորդագրությունն էլեկտրոնային փոստով Ընկերության աշխատակցին ուղարկելով՝ կցելով Ընկերության աշխատակցից ստացված տեղեկացումը:
23. Այն դեպքում, երբ առկա են Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հաճախորդի միջոցների սառեցման հիմքերը, ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը Ընկերության աշխատակցին է ներկայացնում վերջինիս կողմից ներկայացված տեղեկացումը «Միջոցները սառեցնել» գրառումով կամ Ընկերության աշխատակցին ուղարկում է «Միջոցները սառեցնել» հաղորդագրությունն էլեկտրոնային փոստով՝ կցելով Ընկերության աշխատակցից ստացված տեղեկացումը:
24. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը սառեցման մասին որոշումն ընդունելու պահից գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է կասկածելի և դրա վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում լիազոր մարմնին:
25. Այն դեպքում, երբ ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը Ընկերության աշխատակցին տեղեկացնում է լիազոր մարմնի կողմից միջոցների սառեցումը վերացնելու որոշման մասին, Ընկերության աշխատակիցը կարող է կատարել կասկածելի դիտարկված գործարքը (հաստատել գործարար հարաբերությունը):
26. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը սույն կանոնակարգի համաձայն գործարքը դադարեցնելու կամ միջոցները սառեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում որոշումը կայացնելու օրը այդ մասին տեղեկացնում է Ընկերության գործադիր տնօրենին:
27. Ընկերությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում մինչև 5 օրով, իսկ Օրենքի համաձայն լիազոր մարմնից համապատասխան հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես տրամադրել հաշվետվություն լիազոր մարմնին:
28. Ընկերության կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն լիազոր մարմնին՝ իր նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՈՒԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

29. Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն է հաստատում կամ միանգամյա գործարք է կատարում միայն հաճախորդի նույնականացման համար Օրենքով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո:

30. Ընկերությունը հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա: Ընդ որում՝

1) ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները առնվազն ներառում են անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), բնակության վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

2) իրավաբանական անձի համար պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները առնվազն ներառում են իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի) անունը, ազգանունը և, առկայության դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

3) պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար ձեռք բերվող տեղեկությունները առնվազն ներառում են պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

31. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս Ընկերությունը պարզում է, թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին: Ընկերությունը՝

1) սույն կանոնակարգի 29-30-րդ և 35-րդ կետերին համապատասխան, նույնականացնում է լիազորված անձին (առկայության դեպքում), ստուգում նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը:

2) նույնականացնում է իրական շահառուին և ձեռնարկում ողջամիտ քայլեր նրա ինքնությունն ստուգելու նպատակով՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա: Այս նպատակով լրացվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված իրական շահառուի վերաբերյալ հայտարարություն: Իրական շահառուի վերաբերյալ հայտարարությունը գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև այն դեպքում, երբ ի հայտ է գալիս իրական շահառու կամ փոխվում է իրական շահառուն:

32. Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում Ընկերությունը ստանում է լիարժեք տեղեկատվություն այդ իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:

33. Տրաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում Ընկերությունը հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ նրա ինքնությունն ստուգելու նպատակով ստանում է լիարժեք տեղեկություններ դրա հիմնադիրների, կառավարիչների, շահառուների (այդ թվում՝

շահառուների դասի), շահերի պաշտպանի (առկայության դեպքում) և իրական (փաստացի) հսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձի կամ համանման գործառույթներ իրականացնող անձի և նրանց լիազորությունների վերաբերյալ:

34. Ընկերությունը մինչև գործարար հարաբերության հաստատումը կամ միանգամյա գործարքի կնքումը պարզում է հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը:
35. Օրենքով սահմանված դեպքերում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս Ընկերության համար կարող են հիմք ծառայել այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները:
36. Ընկերությունը ձեռնարկում է ողջամիտ քայլեր՝ պարզելու համար, թե արդյոք հաճախորդը կամ իրական շահառուն հանդիսանում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված այլ անձ:
37. Հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ինքնությունն ստուգելու նպատակով Ընկերության ձեռնարկած քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

38. Ընկերությունը գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում է դրա պատշաճ ուսումնասիրություն: Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Ընկերության կողմից հաճախորդի հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:
39. Ընկերությունը թարմացնում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունները (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների)՝ դրանց արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով՝
 - 1) տարեկան մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
 - 2) վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում (քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում՝ երեք ամիսը մեկ անգամ),
 - 3) երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:

ԳԼՈՒԽ 7. ՌԻՍԿԻ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Նախքան հաճախորդի հետ գործարք կատարելը կամ գործարար հարաբերություն հաստատելը, ըստ անհրաժեշտության նաև գործարքի կատարումից կամ գործարար հարաբերության հաստատումից հետո հաճախորդը կամ գործարքը (գործարար հարաբերությունը) դասակարգվում է ըստ ռիսկի հետևյալ չափանիշների՝
 - 1) բարձր ռիսկի չափանիշ,
 - 2) միջին (ստանդարտ) ռիսկի չափանիշ,
 - 3) ցածր ռիսկի չափանիշ:

41. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը գնահատվում է բարձր, եթե առկա են հետևյալ չափանիշներից թեկուզ մեկը՝

- 1) քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդը կամ իրական շահառու,
- 2) գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված իրավաբանական անձինք, որոնք գտնվում են այնպիսի երկրներում կամ տարածքներում, որտեղ (ՀՀ ԿԲ-ի կամ համապատասխան միջազգային կազմակերպությունների սահմանած ցանկերի համաձայն) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները,
- 3) բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն,
- 4) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի իրավաբանական անձի կամ կազմավորման ներգրավվածությունը, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,
- 5) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի անվանատեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր,
- 6) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ,
- 7) այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնես կամ գործարար հարաբերություն:
- 8) բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները,
- 9) այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված,
- 10) առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը:

42. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները:

43. Ցածր ռիսկի չափանիշներ են՝

- 1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
- 2) պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային կառավարչական հիմնարկները, բացառությամբ այն երկրներում կամ տարածքներում (լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան) գտնվող մարմինների կամ կազմակերպությունների, որտեղ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում:

44. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը գնահատվում է ցածր այն դեպքերում, երբ՝

- 1) առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ,

- 2) առկա է միջին (ստանդարտ) ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է լիազոր մարմնի իրավական ակտով նախատեսված ցածր ռիսկի գործարք,
 - 3) առկա է բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է լիազոր մարմնի իրավական ակտով նախատեսված ցածր ռիսկի գործարք:
45. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում Ընկերությունը վերանայում է տվյալ ռիսկի գնահատումը՝ ձեռնարկելով նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:
46. Այն դեպքում, երբ Ընկերության աշխատակցի կարծիքով հաճախորդը կամ գործարքը (գործարար հարաբերությունը) պետք է դասակարգվի որպես բարձր ռիսկի չափանիշ, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին, իսկ ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցից պահանջ ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել հաճախորդին, գործարքը կամ գործարար հարաբերությունը բարձր ռիսկի չափանիշ դասակարգելու համար:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

47. Ընկերությունն իրականացնում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, երբ՝
- 1) հաստատվում է գործարար հարաբերություն.
 - 2) կատարվում է միանգամյա գործարք (փոխկապակցված միանգամյա գործարքներ), այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի գումարը հավասար է կամ գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը.
 - 3) կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների կամ փաստաթղթերի հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ.
 - 4) կասկածներ են առաջանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:
48. Ընկերությունն իրականացնում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ձեռնարկելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկին համապատասխան՝ Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով և սույն կանոնակարգով նախատեսված միջոցառումները:
49. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:
50. Ընկերությունը կարող է չիրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, բացառությամբ նույնականացման և ինքնության ստուգման, եթե առկա են կասկածներ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ, և Ընկերությունը ողջամտորեն կարծում է, որ հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը կհանգեցնի հաճախորդին իր կասկածների բացահայտմանը: Այս դեպքում Ընկերությունը

սույն կանոնակարգով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում լիազոր մարմին:

51. Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն կատարելիս՝ Ընկերությունն իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:

52. Սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Ընկերությունը միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

- 1) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և լիազոր մարմին հաշվետու այլ անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
- 2) համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
- 3) պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
- 4) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին:

53. Բարձր ռիսկի չափանիշի առկայության (այդ թվում՝ գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բարձր ռիսկի չափանիշ բացահայտվելու կամ ի հայտ է գալու) դեպքում, ինչպես նաև Օրենքի համաձայն լիազոր մարմնից հաճախորդի հավելյալ ուսումնասիրության իրականացման հանձնարարականի ստացման իրականացվում է հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրություն, որի շրջանակներում ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը՝

- 1) ստանում է ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերությունն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,
- 2) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,
- 3) հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրում է գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,
- 4) քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում՝ իրականացնում է ընթացիկ հավելյալ դիտարկում:

54. Սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը բարձր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.

- 1) գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը ստուգելիս

պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և լիազոր մարմին հաշվետու այլ անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

- 2) հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
 - 3) հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,
 - 4) հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ կամ փաստաթղթեր:
55. Ցածր ռիսկի դեպքում իրականացվում է հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրություն, որի շրջանակներում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝
- 1) ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
 - 2) իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),
 - 3) պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը:
56. Սույն կանոնակարգի 38-րդ կետով նախատեսված գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը ցածր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ նվազեցված միջոցառումները.
- 1) ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
 - 2) համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
 - 3) պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:
57. Առանց առերես շփման գործարար հարաբերություն հաստատելիս ընկերությունը հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պահանջում է, որ առաջին վճարումը կատարվի այնպիսի ֆինանսական հաստատությունում հաճախորդի անվամբ բացված հաշվով, որը

- 1) իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռքբերված տեղեկությունները, ներառյալ փաստաթղթերի պատճենները,
- 2) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,
- 3) չի գտնվում այնպիսի տարածքում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները (լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան):

58. Եթե հաճախորդն օտարերկրյա իրավաբանական անձ է, օտարերկրյա ֆիզիկական անձ կամ տրաստ, կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում, ապա Ընկերությունը պարզում և գրառում է այդ անձի կենսական շահերի կենտրոնը:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

59. Հաճախորդի (լիազորված անձի) հետ գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս Ընկերությունը նրանից պահանջում է սույն կանոնակարգով սահմանված բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

60. Ընկերությունը պահպանում է Օրենքով, սույն կանոնակարգով պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է, այդ թվում՝

- 1) հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև գործարար թղթակցության տվյալները,
- 2) ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները, որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար,
- 3) կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները,
- 4) սույն կանոնակարգի 2-րդ գլխով նախատեսված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները:

61. Սույն կանոնակարգի 60-րդ մասով սահմանված տեղեկությունները (փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

62. Սույն կանոնակարգով նախատեսված պահպանման ենթակա տեղեկատվությունը հաշվառվում է: Հաշվառումն իրականացվում է ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից էլեկտրոնային եղանակով:

ԳԼՈՒԽ 10. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԹՂԹԱԿՑԱՑԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

63. Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների ընթացքում Ընկերությունը՝

- 1) հավաքում է բավարար տեղեկություններ, որպեսզի ամբողջությամբ պարզի թղթակից հաստատության գործունեության բնույթը,
- 2) հրապարակային ու այլ արժանահավատ տեղեկությունների հիման վրա գնահատում է թղթակից հաստատության գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ այդ ֆինանսական հաստատության՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթում ներգրավվածությունը (ինչպես անցյալում, այնպես էլ սովյալ պահին),
- 3) գնահատում է թղթակից հաստատության կողմից իրականացվող՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգերը, հավաստիանալու համար, որ դրանք բավարար են և արդյունավետ,
- 4) հավաստիանում է, որ թղթակից հաստատությունը՝
 - ա. տարանցիկ հաշիվների դեպքում իրականացրել է Ընկերության հաշիվներին ուղղակի հասանելիություն ունեցող հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն և հարցման դեպքում կարող է տրամադրել այդ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները,
 - բ. թույլ չի տալիս կեղծ բանկերի կողմից իր հաշիվների օգտագործումը:

64. Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային և համանման այլ հարաբերություն հաստատելու վերաբերյալ որոշումը ընդունվում է Ընկերության ավագ ղեկավարության կողմից՝ Ընկերության կանոնադրության համաձայն:

ԲԱԺԻՆ 4. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 11. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

65. Ընկերությունում փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հետ կապված գործառույթներն իրականացվում են ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից:

66. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը իր գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի Ընկերության ավագ ղեկավարության կարգավիճակ:

67. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Ընկերության կողմից ձեռք բերվող ու պահպանվող՝ Օրենքով և սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը:
68. Ընկերության աշխատակիցները պարտավոր են ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի պահանջով նրան ներկայացնել ցանկացած տեղեկատվություն, որը վերջինիս կարծիքով անհրաժեշտ կլինի սույն կանոնակարգով նախատեսված գործառույթներն իրականացնելու համար:
69. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակից կարող է լինել միայն այն անձը, որն ունի լիազոր մարմնի սահմանած կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների համապատասխան որակավորում:
70. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը՝
- 1) վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ,
 - 2) ապահովում է լիազոր մարմնին սույն կանոնակարգով սահմանված հաշվետվությունների և Օրենքով նախատեսված այլ տեղեկությունների տրամադրումը,
 - 3) մշակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտեր և դրանք ներկայացնում համապատասխան մարմնի հաստատմանը,
 - 4) կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների բացահայտման նպատակով իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ,
 - 5) ապահովում է հաճախորդների և գործարքների կամ գործարար հարաբերությունների դասակարգումն ըստ ռիսկի աստիճանի,
 - 6) կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում Ընկերության աշխատակիցների ներքին ուսուցումը և վերապատրաստումը,
 - 7) ապահովում է Ընկերության կողմից Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով և սույն կանոնակարգով սահմանված այլ գործառույթների կատարումը:
71. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է Ընկերության կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքի, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի և սույն կանոնակարգի պահանջներին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցը հաշվետվություն է ներկայացնում Ընկերության տնօրենների խորհրդին՝ ուսումնասիրության ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
72. Սույն կանոնակարգի 71-րդ կետով նախատեսված հաշվետվության մեջ ներառվում է՝
- 1) տեղեկացման ենթակա գործարքների, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ (քանակը, համառոտ նկարագրությունը),

- 2) սույն կանոնակարգի 19-րդ կետով նախատեսված այն գործարքների և գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ (քանակը, համառոտ նկարագրությունը), որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
 - 3) Ընկերության մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ (քանակը, համառոտ նկարագրությունը),
 - 4) սառեցված գույքի չափը,
 - 5) Ընկերության աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի և սույն կանոնակարգի պահանջների խախտման դեպքերը:
73. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակիցն իրավունք ունի Ընկերության տնօրենների խորհրդին անմիջականորեն ներկայացնելու Ընկերության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու տնօրենների խորհրդի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն առնչվող հարցերի քննարկմանը:

ԳԼՈՒԽ 12. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

74. Ընկերությունը կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցում Ընկերության տնօրենների խորհրդի, գործադիր տնօրենի, ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի, ներքին աուդիտի և Ընկերության այլ աշխատակիցների համար:
75. Նոր աշխատակիցների համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումը կազմակերպվում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:
76. Իրականացված ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում և պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:

ԲԱԺԻՆ 5. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

ԳԼՈՒԽ 13. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

77. Ընկերության ներքին աուդիտը, Ընկերության ներքին աուդիտի գործունեության կանոններով նախատեսված կարգով, տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է ստուգում՝ հավաստիանալու համար, որ Ընկերության գործունեությունը համապատասխանում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով և սույն կանոնակարգով նախատեսված ընթացակարգերի և պահանջներին:
78. Սույն կանոնակարգի 77-րդ կետով նախատեսված ստուգումը նախատեսվում է Ընկերության ներքին աուդիտի տարեկան ծրագրով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ

Ես՝ -----ս, -----թ. -----
----- հաստատելով գործարար հարաբերություն կամ գործարքում հանդես
գալով որպես -----, հայտարարում եմ, որ գործարար
հարաբերության մեջ կամ գործարքում իրական շահառու եմ -----ը:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի
փոփոխության դեպքում տեղյակ պահել Ձեզ:

-----թ.
օր ամիս տարի

ստորագրություն